գայլոցն և այլ ևս աւարառութեանցն՝ որք ժամանեցին ի վերայ աշխարհի» վերնագրով է գլխում, Դավրիժեցին ներբերում է ականատեսների կամ իբրև ականատես ներկայացողների պատմություններ դրանց մասին ու շուրջ, որոնք որոշ հանգամանքներով պայմանավորված՝ վերածևվում են զրույցի: Նախ՝ ականատեսի պատմությունը միահյուսվում-ներծուլվում է պատմության բուն շարադրանքին տեքստային հարկավոր-կաղապարային միավորների միջոցով, որոնք այս պարագային համապատասխանում են զրույցի ժանրային կաղապարներից մեկի՝ մուտքի տեքստային կաղապարներին: Այսինքն՝ անպայմանորեն ցուցանում են, որ պատմությունն ինչ-որ մեկը պատմել է: Այդ կերպ՝ հիշատակված գլխում առկա է հինգ զրույց, որոնցից առաջին չորսը պայմանականորեն կարելի է վերնագրել «Զրույց սովի պատճառով մարդկանց ուտելու մասին» (տե՛ս էջ 109–110): Դրանք ունեն հետևյալ մուտքային միավորները. «Որպէս պատմեցին մեզ թէ...», «...տեսողքն պատմեցին ինձ, թէ...», «սա պատմեաց թէ...» և այլն:

Այս նույն գլխում է ընդգրկված նաև կրկին սովին առնչվող ու կրկին պայմանական վերնագրով «Զրույց մարդագայլի առաջացման մասին» հատվածը (տե՛ս էջ 111), որն արդեն կառուցված է իբրև հեղինակային պատմություն: Այսպիսի դեպքերում՝ մուտքային միավորների առկայությունը պարտադիր չէ:

Ընդհանրապես, վկայագրված ընդհանուր իրադարձությունները, ինչպես վերևում՝ սովը, Դավրիժեցին, սովորաբար, հարկ է համարում մանրամասնել օրինակներով, որոնք նույնպես ներկայանում են զրույցի ժանրային նկարագրով: Արդեն քանիցս հիշատակված «Միւս պատմութիւն նեղութեանց, զոր կրեցին ազգն Հայոց յառաջնոյ Շահաբաս թագաւորէն» վերնագրով ԺԴ գլխում, օրինակ, Դավրիժեցին անդրադառնում է այն դեպքերին, երբ Շահ-Աբասը գաղթական հայ կնոջ խոսքերից ազդված ու չարացած՝ հրամայում է մտնել գաղթած հայերով բնակեցված բոլոր գավառները և բնակիչներին մահմեդականացնել ու թլպատել: Նկարա-